ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՄԲԻՈՆ-ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն՝ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (դասիչ՝ 011401.09.6)
Որակավորումը՝ Մանկավարժության բակալավր
Ֆակուլտետ՝ Հասարակական գիտությունների
Ուսուցման ձև՝ Առկա (2-րդ կիսամյակ)

Հաստատված է ամբիոնի նիստում
(կայացած՝ 06.02., արձ. Թիվ 10)
Ամբիոնի վարիչ՝ / / **Ա. Բարսեղյան**

Հաստատված է Հասարակական գիտությունների
Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում
(կայացած՝ 25/09/24, արձ.թիվ 9)

Դեկան՝ / / **Հ. Պապոյան**

Կազմող(ներ)՝ / / **Ա. Ա Բարսեղյան (մ.գ.թ., դոցենտ)**
/ / **Հ. Է. Սարգսյան (դոցենտ)**
/ / **Մ.Վ.Նուրիջանյան (դոցենտ)**

ՎԱՆԱՁՈՐ
2024թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. **Պրակտիկայի նպատակը՝**

Որակավորմամբ պահանջվող մասնագետի կայացման առհավատչյան մասնագիտական աշխատանքում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացումն է, մասնագիտական անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորումը: Որպես հիմք հանդիսանում են ծանոթացումը տարբեր մարզադպրոցների, հասարակական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև մարզաձևերի, ֆիզկուլտուրային աշխատանքների կազմակերպմանը և անցկացմանը:

2. **Պրակտիկայի խնդիրները՝**

- Ուսումնասիրել պրակտիկայի մարզաբազաների աշխատանքային գործունեությունը, ղեկավարման համակարգը, մարզչական գործունեությանը, մարզական գործընթացի անցկացման պայմանները և առանձնահատկությունները,
- Մանկավարժական կարողությունների և հմտությունների կիրառական մակարդակը (ընտրած մարզաձևերում) հասցնել այնպիսի աստիճանի, որը թույլ կտա ինքնուրույն լուծել ընտրած մարզաձևերի մարզիկների պատրաստության գործնական խնդիրները,
- Ուսումնասիրել ընտրած մարզաձևերի ուսումնամեթոդական փաստաթղթերը և ձևավորել գործնական կարողություններ, որոնք թույլ կտան ինքնուրույն կազմել պլանավորման փաստաթղթեր և կատարել տարբեր մեթոդական աշխատանքներ,
- Ընտրած մարզաձևերում ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ՝ ուսումնամարզական պարապմունքներ անցկացնելու նպատակով,
- Ուսանող-պրակտիկանտի մոտ ձևավորել հետաքրքրություններ, ակտիվ և ստեղծագործական մոտեցումներ մարզչական աշխատանքի նկատմամբ:

3. **Պրակտիկայի հաստատությունը, վայրը՝**

- Վանաձորի «Ա.Ազարյանի անվան «Կենտրոն» համալիր մարզադպրոց»-ՀՈԱԿ,
- Վանաձորի«Աթլետիկայի մարզադպրոց»-ՀՈԱԿ:

4. **Պրակտիկայի ընթացակարգը**

Հասարակական գիտությունների ֆակուլտետի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտության ուսումնական պրակտիկայի անցկացման ժամանակացույցն ու ընթացակարգն է.

Առկա ուսուցման համակարգ՝

Հ/Հ	Կուրս	Կիսամյակ	Տևողությունը	Ժամ	Կրեդիտ
1	1-ին	2-րդ	2 շաբաթ	60 ժամ	3
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 60 ժամ					

5. **Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից, ղեկավարի) պարտականությունները, գործառույթները, գործառույթների նկարագրությունը.**
   - Ներկայացնել ուսումնական գործընթացը ընթացակարգը,
   - Հետևել պրակտիկանտների մասնակցությանը տարբեր մարզաձևերի մարզական պարապմունքներին,
   - ՄՊՄԴ-ի աշխատանքների կազմակերպումը,
   - Պլանավորման աշխատանքները մարզադպրոցներում,
   - Պատրաստականության տեսակները ՄՊՄԴ-ում,
   - Հաշվառումը և գնահատումը ըստ մարզաձևերի,
   - Ներկայացնել հաշվետվություն և գնահատել:

6. **Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները.**
   - Ծանոթանալ մարզադպրոցների ուսումնական գործընթացներին,
   - Մասնակցել մարզումային գործընթացներին,
   - Կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն:

7. **Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը՝** պրակտիկայի վերջում ներկայացնում են հաշվետվություն:

8. **Պրակտիկայի գնահատումը՝** պրակտիկան գնահատվում է 100 միավորային սանդղակով: